ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԳՈՅԱՑՄԱՆ ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ

ՀՏԴ 631.47
DOI 10.56246/18294480-2022.12-05

ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐՏԻՆ
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր,
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան
Էլփոստ՝ avagyanmartin@rambler.ru
ԷՖԵՆԴՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ
տեխնիկական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր,
ԳՊՀ և ՀԱԱՀ դասախոս
Էլփոստ՝ armgeoinfofm@mail.ru

Հայաստանի Հանրապետությունը վերընթաց գոտիականության դասական երկիր է, որն աչքի է ընկնում բարդ ֆիզիկաաշխարհագրական ու ռելիեֆային պայմաններով, տարածքի բացարձակ և հարաբերական բարձրությունների մեծ տատանումները պայմանավորել են նրա բնական պայմանների խիստ բազմազանությունը:

Վերընթաց գոտիականության շնորհիվ կարելի է հանդիպել գրեթե բոլոր բնական գոտիները՝ մերձարևադարձայինից մինչև ալպյան: Ռելիեֆը պայմանավորում է կլիմայի բնույթը, հողաբուսական ծածկույթի առանձնահատկությունները: Կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ վերընթաց գոտիականության:

Հողային կադաստրի համակարգում հողային ֆոնդի քանակական և որակական բնութագրումը հնարավորություն է տալիս ճիշտ կատարել տարածքի հողակադաստրային շրջանացում, որի նպատակն է կադաստրային գնահատման միջոցով բացահայտել տարբեր շրջանների հողերի արտադրական ունակության համեմատականությունը և համադրելիության աստիճանը:

Հողային կադաստրի համակարգում հողային ֆոնդի որակական բնութագրումը և դասակարգման արդյունքները հնարավորություն են տալիս ճիշտ կատարել հողերի հաշվառումը:

Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվում է հողօգտագործման հինգ բնահողային գոտիների:

Հանրապետության հողային ֆոնդի հողակադաստրային շրջանացումը տարածքի բաժանման գիտական համակարգ է, որը բնութագրվում է բնական, հողային և տնտեսական գրեթե միատարր պայմանների հայտնաբերմամբ, նպաստում է գյուղատնտեսական հողատեսքերի ճիշտ գնահատմանը, արտադրության օպտիմալ տեղաբաշխմանն ու տնտեսական օբյեկտիվ նախապայմանների ստեղծմանը:

Բանալի բառեր՝ *վերընթաց գոտիականություն, կլիմա, ռելիեֆ, հողային ծածկույթ, կադաստր, հողակադաստրային շրջանացում:*

Նյութը և մեթոդները

Հողերի պահպանման, բերրիության բարձրացման, դրանց արդյունավետ օգտագործման, կադաստրային գնահատման տեսական, մեթոդական և տեխնոլոգիական սկզբունքների մշակման հարցերը բոլոր ժամանակներում եղել են խիստ արդիական:

Հայաստանի բարդ ֆիզիկաաշխարհագրական պայմաններն էական ազդեցություն են ունեցել հողերի ագրոարտադրական հատկությունների վրա: Այս առումով ՀՀ տարածքում հողերի կադաստրային գնահատումը անհրաժեշտ է դիտարկել հողակադաստրային շրջանացման տեսանկյունից՝ հաշվի առնելով վերընթաց գոտիականության օրինաչափությունները: Հոդվածում վերլուծման է ենթարկվել ՀՀ հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության, ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքն ըստ հողատեսքերի, հողային կադաստրի համակարգում հողային ֆոնդի քանակական և որակական բնութագրերը:

Արդյունքները և վերլուծությունը

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Անդրկովկասի հարավային մասում, զբաղեցնելով Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածը: Տարածքի ձգվածությունը հյուսիսարևելյան ուղղությամբ կազմում է մոտ 400 կմ, իսկ արևելքից արևմուտք ամենալայն մասում՝ 200 կմ:

Հայաստանի Հանրապետությունը տիպիկ լեռնային երկիր է: Նրա միջին բացարձակ բարձրությունը ծովի մակարդակից 1830 մ է, ամենացածր կետերը՝ 375–380 մ, գտնվում են Դեբետ (Լալվար ավանից 2 կմ հյուսիս) և

Արաքս (Նռնաձոր գյուղից 4 կմ արևելք) գետերի ափերին, իսկ ամենաբարձր կետը՝ 4090 մ, Արագածի հյուսիսային գագաթն է:

Հայաստանի հանրապետության տարածքի 9,5% տեղաբաշխված է մինչև 1000 մ բարձրության վրա, 1000–1500 մ բարձրության վրա գտնվող տեղամասերը կազմում են 18,3 %, 1500 – 2000 մ՝ 31,3%, 2000 – 25000 մ՝ 24,5%, 2500 մ-ից բարձր՝ 16,0 % [1]

Հայաստանի Հանրապետությունը երկրաբանական տեսակետից բարդ երկիր է, որտեղ հայտնաբերված են համարյա բոլոր երկրաբանական դարաշրջանների ապարներ՝ սկսած մինչքեմբրյան ձևափոխված թերթաքարերից մինչև չորրորդականի անդեզիտաբազալտներն ու ժամանակակից լճագետային գոյացությունները: Բարդ և բազմապիսի լեռնային ռելիեֆի առաջացումը հիմնականում պայմանավորված է նրա ձևակառուցվածքային տարրերի առանձնահատկություններով: Հանրապետության մակերևույթը ծալքաբեկորային, ուղղագիծ լեռնաշղթաների, հրաբխային լեռնավահանների, խոշոր լեռնազանգվածների, սարահարթերի ու սարավանդների, միջլեռնային գոգավորությունների, խորը գետահովիտների, առանձին լճային գոգովորությունների մի բարդ համակցություն է:

Հայկական լեռնաշխարհը հարավարևմտյան Ասիայի բարդակառույց երիտասարդ լեռնային գոտու ընդհանուր շղթայի օղակներից է:

Հանրապետության տարածքի տարբեր մասեր աչքի են ընկնում կլիմայական պայմանների խիստ բազմազանությամբ: Տարածքի կլիմայական պայմանների տարբերությունների ձևավորման գործում տեղական գործոնների հետ միասին կարևոր դեր է խաղում մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը, որտեղ գերակշռում է օդային զանգվածների արևմտյան հոսքը: Այն աչքի է ընկնում չափավոր ջերմաստիճաններով և բավարար խոնավությամբ ու համարվում է հանրապետություն թափանցող խոնավության հիմնական աղբյուրը: Կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ վերընթաց գոտիականության:

Հայաստանի Հանրապետությունը մտնում է չոր ցամաքային կլիմա ունեցող Անդրկովկասի կլիմայական մարզի մեջ: Երկրի կլիման ձևավորվել է հարևան Կասպից և Սև ծովերից ներթափանցող օդային հոսանքների, երկրի ռելիեֆի և տարվա տարբեր եղանակներին այստեղ ներխուժող հյուսիսային ցուրտ և հարավային չոր ու տաք օդային զանգվածների ազդեցության տակ [2]:

ՀՀ-ում կլիմայական պայմանները փոխվում են հյուսիս-արևմուտքից հարավարևելյան ուղղությամբ և հատկապես ռելիեֆի ցածրադիր մասերից դեպի լեռները [3]:

Հայաստանի հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջանների Սև և Կասպից ծովերից փչող հոսանքներին ենթակա լեռնալանջերը, հովիտները և սարահարթերն ունեն բարեխառն տաք, մեղմ կլիմա: Տարեկան տեղումների քանակն այստեղ հասնում է 500-700մմ, իսկ 100-ից բարձր ջերմության տարեկան գումարը տատանվում է 3500-38000-ի սահմաններում:

Չոր, խիստ ցամաքային կլիմա ունեցող կենտրոնական Հայաստանի, Արարատյան գոգահովտի և Արփա գետի ավազանի ցածրադիր և միջին տարածքները, որոնք հյուսիսից և հյուսիս-արևելքից պատնեշված լինելով Հայկական հրաբխային բարձրավանդակի և Փոքր Կովկասի միջին բարձրություն ունեցող լեռներով, աննշան խոնավություն են ստանում:

Լեռնատափաստանային բարեխառն կլիմա ունեցող բարձրադիր սարահարթերի, գոգահովիտների և լեռների շրջանում (Շիրակի սարահարթ, Սևանի ավազան և կից լեռնաստանները) տարեկան տեղումների քանակը չի գերազանցում 450-600մմ: Տեղումների զգալի մասը թափվում է գարնանը և աշնանը:

Բարդ ռելիեֆի ազդեցությամբ և բազմազան կլիմայական պայմաններում մեր երկրում ձևավորվել է բնական լանդշաֆտների և դրանց բաղադրիչների բացառիկ բազմազանություն: Վերընթաց գոտիականության շնորհիվ կարելի է հանդիպել գրեթե բոլոր բնական գոտիներն՝ մերձարևադարձայինից մինչև ալպյան: Ռելիեֆը պայմանավորում է կլիմայի բնույթը, հողաբուսական ծածկույթի առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության տարածքում առանձնացվում են հողերի 14 գենետիկական տիպ, 27 հողատիպ և բազմաթիվ սեռեր, տեսակներ ու տարատեսակներ:

Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվում է հողօգտագործման հինգ բնահողային գոտիների (ԲՀԳ) [4]:

Լեռնամարգագետնային ԲՀԳ: Այս գոտին ներառում է գենետիկական երկու հողատիպ՝ լեռնամարգագետնային և մարգագետնատափաստանային: Այդ հողերը ձևավորվել են ծովի մակերևույթից 1800-2600 մ բարձրության վրա մասնատված լեռնալանջերում, հարթ ջրբաժաններում ու սարահարթերում, լեռնային ցուրտ, խոնավ և չափավոր խոնավ կլիմայի պայ-

մաններում, ալպյան և ենթալպյան խիտ ու ցածրաճ բուսական խմբավորումների տակ:

Անտառային ԲՀԳ: Այս բնահողային գոտին ընդգրկում է երեք հողատիպ՝ անտառային գորշ, անտառային ճմակարբոնատային և անտառային դարչնագույն, քանի որ վարելահողերը հիմնականում տարածված են անտառային դարչնագույն հողերի սահմաններում:

Տափաստանային ԲՀԳ: Այս գոտում ներառված են սևահողերը, մարգագետնասևահողերը, գետահովտադարավանդային հողերը:

Մարգագետնային սևահողերը ձևավորվել են տափաստանային գոտում սևահողերի տարածման սահմաններում, մակերեսային կամ գրունտային խոնավացման պայմաններում: Տարածված են հիմնականում Լոռու տափաստանում, Շիրակի սարահարթում և Սևանի ավազանում:

Չոր տափաստանային ԲՀԳ: Այս գոտում 1250-1950 մ բարձրության սահմաններում, միջլեռնային գոգահովիտներում ու դրանց հարող լեռնալանջերում տարածված են միայն շագանակագույն հողերը:

Կիսաանապատային ԲՀԳ: Այս բնահողային գոտում զարգանում են կիսաանապատային գորշ, ոռոգելի մարգագետնային գորշ հողերը, որոնց սահմաններում տարածված են հիմնականում ոռոգելի վարելահողերը:

Հողային կադաստրի համակարգում հողային ֆոնդի քանակական և որակական բնութագրումը հնարավորություն է տալիս ճիշտ կատարել տարածքի հողակադաստրային շրջանացում, որի նպատակն է կադաստրային գնահատման միջոցով բացահայտել տարբեր շրջանների հողերի արտադրական ունակության համեմատականությունը և համադրելիության աստիճանը:

Հանրապետության հողային ֆոնդը 2021թ. կազմում է 2974.3 հազ.հա: Հանրապետության հողային ֆոնդի մեջ գերակշռող են համարվում գյուղատնտեսական նշանակության հողերը: ՀՀ հողային հաշվեկշռում գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժինը վերջին 16 տարիների ընթացքում ենթարկվել է զգալի փոփոխությունների (աղ. 1):

Աղյուսակ 1.

Գյուղատնտեսական հողերի մակերեսների փոփոխության դինամիկան 2005-2021 թթ. [5]

Տարիներ	Գյուղատնտեսական նշանակության հողեր						
	տարածքը, հազ. հա	ըստ ընդհանուր հողային ֆոնդի, %	այդ թվում				
			Վարելա-հողեր, հազ. հա	բազմամյա տնկարկներ, հազ. հա	խոտհարք-ներ, հազ. հա	արոտներ, հազ. հա	այլ հողա-տեսքեր, հազ. հա
2005	2135,3	71,8	457,7	29	127,8	885,1	635,7
2006	2129,6	71,6	452,9	27,3	127,5	1125	396,9
2007	2122,1	71,3	452,1	29,6	127,5	1118,3	394,6
2008	2121,21	71,3	450,36	31,57	127,36	1117,14	394,78
2009	2120,31	71,3	449,41	32,56	127,35	1116,56	394,43
2010	2100,9	70,6	448,5	32,9	127,1	1104,3	388,1
2011	2077,0	69,8	449,2	33	128,3	1067,2	399,3
2012	2052,4	69	448,4	33,4	121,6	1056,3	392,7
2013	2051,0	69	448,2	33,3	121,8	1055,3	392,4
2014	2049,4	69,9	447,5	33,7	121,7	1054,2	392,3
2015	2045,7	68,8	446,7	34,4	121,1	1051,3	392,2
2016	2045,5	68,8	446,4	34,7	121,1	1051,3	392
2017	2043,8	68,7	446	34,8	121	1050,8	391,2
2018	2044,5	68,7	445,6	35,3	121	1051,6	391
2019	2044,2	68,7	444,8	36,4	121,1	1051,1	390,8
2020	2043,51	68,7	444	37,34	121,11	1050,54	390,52
2021	2042.48	68,6	443.4	38.06	121.23	1049.87	389.90
2005-2021	-92,82	-3,2	-14,3	9,06	-6,57	164,77	-245,8

Ըստ աղյուսակ 1-ի՝ 16 տարիների ընթացքում գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսները նվազել են 92,82 հազ. հա-ով, այսինքն՝ յուրաքանչյուր տարի շրջանառությունից դուրս է եկել 5737 հա հող: Տոկոսային առումով գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժինը ՀՀ հողային հաշվեկշռում նվազել է 3,2 %-ով՝ 71,8 %-ից հասնելով 68,6 %-ի:

Էական է վարելահողերի նվազման դինամիկան. 2005 թ. հետ համեմատած՝ 2021 թ. այն նվազել է 457,7 հազ.հա-ից մինչև 443,4 հազ.հա կամ նվազել է 14,3 հազ.հա-ով:

Բազմամյա տնկարկների մակերեսը ավելացել է 9,06 հազ.հա՝ 29 հազ.հա-ից դառնալով 38,06 հազ.հա: Խոտհարքների մակերեսը, համեմատած 2005 թվի հետ, պակասել է 6,57 հազ. հա-ով՝ 127,8 հազ.հա-ից նվազելով 121,23 հազ.հա: Գյուղատնտեսական հողատեսքերի կազմում զգալի տարածություններ են գրավում արոտավայրերը, որոնք նշված ժամանակահատվածներում ավելացել են 164,77 հազ. հա:

Ըստ աղյուսակ 2-ի՝ պակասել են գյուղատնտեսական նշանակության, անտառային ֆոնդի և պահուստային հողերը, ավելացել հատուկ պահպան-

վող տարածքների հողերը: 2005-2021 թթ. վիճակագրական տվյալների վերլուծության համաձայն՝ հողերի կատեգորիաների փոփոխության արդյունքում պահուստային հողերի մեծ մասը դասվել է գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիային, որոնց մի մասը հետագայում վերափոխվել է բնակավայրերի, արդյունաբերական, ընդերքօգտագործման, այլ արտադրական նշանակության և հատուկ պահպանվող տարածքների հողերի:

Հողային կադաստրի համակարգում հողային ֆոնդի որակական բնութագրումը և դասակարգման արդյունքները հնարավորություն են տալիս ճիշտ կատարել հողերի հաշվառումը:

Աղյուսակ 2

ՀՀ հողային ֆոնդի փոփոխությունները 2005-2021 թթ.[5]

Հողեր	Տարածքը և տոկոսային հարաբերակցությունն ըստ տարիների		Փոփոխություններ (+, -)	
	2005	2021	հազ. հա	%
Գյուղատնտեսական նշանակության	2135,3/71,8	2042,48/68,6	-92,82	-3,2
Բնակավայրերի	133,9/ 4,5	152,32/5,1	18,42	0,6
Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	20,9/0,7	38,97/1,3	18,07	0,6
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	9,1/0,3	14,5/0,48	5,40	0,18
Հատուկ պահպանվող տարածքների	187,8/6,3	335,64/11,3	147,84	5
Հատուկ նշանակության	29,5/1	30,51/1	1,03	0
Անտառային	398/13,4	334,02/11,2	-63,98	-2,2
Ջրային	22,1/0,7	25,83/0,8	3,72	0,1
Պահուստային	37,7/1,3	0,62/0,02	-37,08	-1,28
Ընդհանուր նշանակության	2974,3	2974,3		

Դա նպաստում է հողերի հետազոտական, նախագծային և մելիորատիվ աշխատանքների ճիշտ կողմնորոշմանը, որոնք ուղղված են հողերի բարելավման, բերրիության բարձրացման և շրջակա միջավայրի պահպանմանը և հողային կադաստրի վարմանը:

Եզրակացություն

Հայաստանի բարդ ֆիզիկաաշխարհագրական պայմաններն էական ազդեցություն են ունեցել ինչպես հողերի ագրոարտադրական հատկությունների, այնպես էլ հողակադաստրային շրջանացման վրա՝ հաշվի առնելով վերընթաց գոտիականության օրինաչափությունները: ՀՀ տարածքում հողերի կադաստրային գնահատումը անհրաժեշտ է դիտարկել հողակադաստրային շրջանացման տեսանկյունից, որի նպատակն է հաշվարկել, գնահատել և համադրել հանրապետության վարելահողերի բնական և տնտեսական ցուցանիշների գոտիական տարբերությունները:

Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային գնահատումը իրականացվում է հանրապեության տարածքի հողակադաստրային շրջանացման հիման վրա: Հողակադաստրային շրջանացման անհրաժեշտությունը պայմանավորված է տարածքի չափազանց բարդ բնատնտեսական և հողային պայմաններով, որոնք զգալիորեն ազդում են հողերի գնահատման ցուցանիշների վրա:

Հողային ֆոնդի որակական բնութագրումը և դասակարգման արդյունքները հնարավորություն են տալիս ճիշտ կատարել հողերի հաշվառում, բացահայտել տարբեր հողակադաստրային շրջանների հողերի արտադրական ունակության համեմատականությունը և համադրելիության աստիճանը:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 21T-4C 249 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ս. Պ., Հայկական ՍՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ // (1986), էջ 15-17:

2. Եզեկյան Ա. Ս., Էֆենդյան Պ. Ս. Հողային կադաստր // Երևան, ՀՊԱՀ 2008, 281 էջ:

3. Մկրտչյան Ռ. Ս., Հայրապետյան Ֆ. Փ. Հայաստանի բնության օրացույց // - Եր., 2008. 297 էջ:

4. Էֆենդյան Պ. Ս., Աբրահամյան Մ. Ա., Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման հիմնախնդրիները Հայաստանի Հանրապետությունում // Ագրոգիտություն և տեխնոլոգիա 2021, N1

5. Багдасарян А. Б. Климат Армянской ССР/ Ереван, изд. АН Арм. ССР, 1958, с. 150.

ASSESSMENT AND LAND CADASTRAL CIRCULATION OF PHYSICAL-GEOGRAPHICAL CONDITIONS OF LAND FORMATION IN THE REPUBLIC OF ARMENIA

AVAGYAN MARTIN
Doctor of Agricultural Sciences,
Dean of the Faculty of Natural Scineces, GSU
e-mail: avagyanmartin@rambler.ru
EFENDYAN PARUYR
Doctor of Technical Sciences, Professor
Lecturer at ANAU and GSU
e-mail: armgeoinfofm@mail.ru

The Republic of Armenia is a classic country of upward zoning, which stands out with its complex physical-geographical and relief conditions, large fluctuations of absolute and relative heights of the territory have conditioned the extreme diversity of its natural conditions.

Due to the upward zone, almost all natural zones can be found, from subtropical to alpine. The relief determines the nature of the climate, the peculiarities of the land cover. Climate conditions change according to the upward zoning.

Quantitative and qualitative description of the land fund in the land cadastre system makes it possible to accurately make the land cadastral circulation of the area, the purpose of which is to reveal the degree of comparability of the lands productivity of different regions.

The territory of the Republic of Armenia is divided into five natural land use zones.

The land cadastral zoning of the land fund of the Republic is a scientific system of division of territory, which is characterized by the discovery of natural, land and economic homogeneous conditions, contributes to the correct assessment of agricultural land types, optimal distribution of production and creation of objective economic preconditions.

Keywords: *Upward zoning, climate, relief, land cover, Cadastre, land cadastral circulation.*

ОЦЕНКА ФИЗИКО-ГЕОГРАФИЧЕСКИХ УСЛОВИЙ ОБРАЗОВАНИЯ ЗЕМЕЛЬ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ЗЕМЕЛЬНО-КАДАСТРОВОЕ РАЙОНИРОВАНИЕ

АВАГЯН МАРТИН
Доктор сельскохозяйственных наук,
декан факультета естественных наук
Гаварского государственного университета
электронная почта: avagyanmartin@rambler.ru
ЭФЕНДЯН ПАРУЙР
Доктор технических наук,
профессор, НАУА и ГГУ
электронная почта: armgeoinfofm@mail.ru

Республика Армения – классическая страна восходящей поясности, отличающаяся сложными физико-географическими и рельефными условиями, большие колебания, абсолютных и относительных высот территории, обусловили чрезвычайное разнообразие ее природных условий.

Благодаря восходящей зоне можно найти почти все природные пояса, от субтропической до альпийской. Рельеф определяет характер климата, особенности растительного и почвенного покрова.

Климатические условия изменяются по восходящей поясности.

Количественно-качественная характеристика земельного фонда в системе земельного кадастра дает возможность точно выполнить земельно-кадастровое районирование территории, целью которого является посредством кадастровой оценки, выявить сравнимость и степени сопоставимости производственных возможностей земель разных регионов.

Площадь Республики Армения делится на пять природных зон землепользования.

Земельно-кадастровое районирование земельного фонда республики представляет собой научную систему деления территории, которая характеризуется выявлением почти однородных, природных, земельно-хозяйственных условий, способствует правильной оценке земель сельскохозяйственного назна-

чения, оптимальному размещению производства и созданию объективных экономических предпосылок.

Ключевые слова: *верхнее районирование, климат, рельеф, земельный покров, кадастр, земельно-кадастровое районирование.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 21.04.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 24.04.2022թ.: